


Չե՛ր առաջնահերթ սրբոտրը նկատեցէք, մասն եղբայրական սիրոյ յարաբերութիւններ մշակել Հարաւային Ամերիկայի երկիրներու քոյր Եկեղեցիներու, յատկապէս Հռոմէական կաթողիկ մեծ Եկեղեցոյ բարձրաստիճան հոգեւորականներու հետ, արդիական Էկումենիկ ոգիով, առաջնորդուելով քրիստոնէութեան տիեզերական եղբայրութիւնը ամրապնդելու աստուածահաճոյ գաղափարով:

Վստահ ենք մասն թէ Չե՛ր հոգեւէն առաքելութեան ճանապարհին, միշտ մտածմտտ և նախանձախնդիր պիտի ըլլաք որ Չե՛ր առաջնորդութեան լանջներուամ Մե՛ր հաւատացեալ զաւակները ապրին ու գործեն իրրեւ կարգապահ, հաւատարիմ և շինարար քաղաքացիները իրենց քնակած երկիրներու, միշտ երախտապարտ ալն քոյր բարիքներուն և ազատութիւններուն համար զոր կը վալելեն, պետական իշխանութեանց կողմէ իրենց շնորհուած:

Թող քարին Աստուած միշտ մնայ Չե՛րդ Սրբազնութեան հզօրիչ ու մարտակից, և Սուրբ Հոգիով լուսատրել Չե՛ր կեանքի ու աշխատանքի ճամբան, պարգեւելով Չե՛զի մարմնոյ և հոգւոյ տոկունութիւն, անսպառ եռանդ, անմուգելի սէր և միշտ յաղթող ոգի լաւատեսութեան:

«Եւ արդ՝ զմանդէս սիրոյ ձերոյ և զմերոյ պարծանացն վասն ձեր, ի դոցա ցուցչիք յանդիման ամենայն եկեղեցեաց» (Բ. Կորնթ. Ը 24):

«Եւ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առանկոյ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13). ամէն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակն ի 4 յունուարի
1950 փրկական ամի,
և ի տունարիս հայոց ՌՆԻԹ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1001

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆԺՅԱՆԻՆ ԱՐԲՈՒԹՅԱՆ
ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆԺՅԱՆԻՆ,
ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԳԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՌԱՏՐԱԿՈՑ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՐՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Սիդնեյ


Բարին Աստուած Իր լուսապաակ հովանիին տակ շէն ու պայծառ կը պահէ մեր եկեղեցիները, որոնք մշտապէս Սուրբ Հոգւոյ կենարար շնորհները կը բաշխեն իրենց Սուրբ Մեղանքներէն մեր հաւատացեալ ժողովուրդին ի Հայաստան և ի սփիտս աշխարհի:

Մենք հոգեպես մխիթարուած ենք, որ մեր եկեղեցիները, հայ հաւատացեալ ժողովուրդին ծոցին մէջ իրենց ա՛յս առաքելութիւնը ի կատար կ'ածեն, մանաւանդ իմաստուն ու արթուն վերատեսչութեան ու առաջնորդութեան ներքն մեր բարձրաստիճան հոգևոր եղբայրներուն:

Սիրելի Սրբազան, Դուք ևս կը պատկանիք մեր այդ եղբայրներու հոյլին, Ձեր երկարամեայ ուխտապահ ու հոգեշէն գործունէութեամբ, Ձեր մըշտանորոգ բարի եռանդով և անվարան հաւատարմութեամբ Մայր Աթոռիս հանդէպ, գնահատուած և սիրուած տիրախնամ թեմիդ եկեղեցական-ազգային մարմիններու և հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Արդ, Ձեր քահանայական սուրբ ձեռնադրութեան երեսնամեակի լրութիւն, ջերմապէս գնահատելով անցեալ տարիներու Ձերդ Սրբազնութեան եկեղեցականութիւնը, ծառայութիւնները, այլև ընդառաջելով թեմական խորհուրդիդ կրկնակի խնդրանքներուն, սոյն Մեր հայրապետական կոնդակով Ձեզի կը շնորհենք ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, աղօթքով արտեռանդ որ Տէրը Ձեզի շնորհէ ևս բազում տարիներ քաջառողջութեամբ, շարունակելու համար Ձեր նուիրական առաքելութիւնը մեր հաւատաւոր ժողովուրդի ծոցին մէջ, Ձեզի յատուկ խանդավառ սրտով և ոգեշնչումով:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա. Կորնթ. ԺԶ 13): Ամէն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21 յունուարի
1980 փրկչական ամի,
և ի տումարիս հաղոց ՌՆԻԹ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1002

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

1. Հոգեշնորհ տ. Իսահակ ծայրագոյն վարդապետ Ղազարյանին
Աղեքսանդրիա-Եգիպտոս: Գնահատանքի և օրհնության կոնդակ՝
ծննդյան 80-ամյակի առթիւ: 11 դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 987:
2. Արժանապատիւ տ. Մովսէս քահանա Ղազարյանին
Ս. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 10
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 989:
3. Արժանապատիւ տ. Գորգեն քահանա Մուրադյանին
Ս. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 14
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 990:
4. Արժանապատիւ տ. Աթանաս քահանա Մովսիսյանին
Ս. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 12
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 991: